ՀԱՆՃԱՐ

Ճարտասան լեզուով մարդկանց հմայել,
Սուտ անշահասէր դրսից ձեւանալ,
Բարոյականը խօսքով քարոզել,
Ձեռն ընկած աւանդ փողերը կուլ տալ.
Կեղծաւոր զՁած, մօլի եսասէր,
Հակառակորդի կրունկից խփել,
Գլխում օդային ամրոցներ շինել,
Ուժը չ՛չափած կռիւ յորդորել,
Եւ ցնորամիտ, դաղարկ յոյսերով
Պուլեմեստի դէմ փայտերով կռուել.
Հետևանքը ի՞նչ.—մի մեծ պատուհաս
Հայերիս օրհաս,
Բարքերի անկում
Երկրի քայքայումն
Արիւն և կրակ, աւեր և արիւն
Ահա արդիւնքը քո սին խօսքերուն.
Եւ այս բոլորը աղգասիրաբար,
Զօրեց կատարել միայն քո հանճարդ։

Մ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ.

1 Օգոստ. 1907.